

ԵՐԱՆԻ ԱՅՆ ՕՐԸ...

Հեռախոսը զնգաց, եւ իմ բարեկամ Հակոբ Պետրոսյանը, որի տանը Լոս Անջելեսում ապրում էի ես, անսպասելիորեն ինձ մեկնեց լսափողը:

- Ո՞վ է, - զարմացա ես:
- Վահանն է, - ի պատասխան հնչեց լսափողի միջից:
- Վահան Հովսեփյանն է, Արտաշես...

Անմիջապես աչքերիս առջեւ հայտնվեց Երեւանի մեր գորշ ու հին տպարանը Գնունի փողոցի վրա, մեր նեղ սրբազրատունը՝ միջանցիկ քամիներից տատանվող իր բարակ ու մրոտ առաստաղով, մրոտ բազմոցով ու մրոտ սեղանով, որի վրա էջկապ Վահանը մեր առջեւ փռում է «Երեւան» թերթի սպիտակ, խոնավ էջերը: Վահանը, թերթերի թիվ 2 տպարանի ամենաբարեխիղճ ու ամենահմուտ էջկապը, որը մեզ միշտ հիացնում էր ոչ միայն իր պրոֆեսիոնալ բացառիկ վարպետությամբ, այլեւ նրանով, որ զարմանալիորեն կարողանում էր իրեն մաքուր ու անբասիր պահել տպարանային կեղտ ու մրի մեջ՝ բառիս եւ փոխաբերական, ե՛ւ բուն իմաստով: Նա միշտ սափրված էր ու փողկապով: Նրա վերնաշապիկը ձյունաթույր էր եւ խալաթը՝ արդուկված:

- Վարպե՛տ Վահան, - անակնկալի եկած գոռացի ես:
- Ես եմ, - ասաց Վահանը: - Թերթում կարդացի, որ այստեղ ես: Սարգիս որդուս ուղարկում եմ քո հասցեով: Կներես, որ ես չեմ գալիս, վիրահատել են...
- Քե՞զ ինչ է եղել Վահան:
- Եկ մի կարգին խոսենք, եղբայր:

Բայց մինչեւ Վահանին հասնելը, ես «մի կարգին» նրա Սարգիս որդու հետ խոսեցի, որն ինձ իրենց տուն տարավ՝ լիմուզինով: Առանձնապես չտես չեմ, բայց մինչ այդ լիմուզին չէի նստել, որը գրեթե մի տուն է՝ իր շքեղ կահկարասիով, հեռուստացույցով, լեփ-լեցուն սառնարանով ու բարով:

- Ի՞նչ կարիք կար այս հսկա ավտոմեքենան վարձելու, - ասացի ես Վահանի Սարգիս որդուն, որը հոր նման ազնվադեմ, բարեհամբույր մի երիտասարդ էր:
- Չենք վարձել, - կարծես թե ամաչելով ասաց Սարգիսը:
- Սա մերն է: Մենք լիմուզինների պարկ ունենք:
- Մենք... այսինք՝ ովքե՞ր:
- Սկզբում պրեզիդենտը հայրիկն էր, իսկ, երբ հիվանդացավ, կրտսեր եղբորս՝ Հակոբին, նշանակեց պրեզիդենտ:

- Իսկ դո՞ւ...

- Ես ավտոնորոգման ձեռնարկության տնօրենն եմ:

- Իսկ հայրի՞կը...

- Հայրիկը ժամանակին հողամաս գնեց, շինություններ կառուցեց եւ հիմա վարձով է տալիս զանազան խանութների:

- Ուրեմն բոլորդ էլ փաստորեն կապիտալիստներ եք, էլի, - ծիծաղեցի ես:

- Իհարկե, - ծիծաղեց նաեւ Սարգիսը: - Միայն թե հիմնականում մենք մեզ ենք շահագործում: Իսկ մեր ամենամեծ շահագործողը եւ միաժամանակ գերագույն գլխավոր հրամանատարը հայրիկն է:

Չանցած մի ժամ ես արդեն գրկախառնվել էի «Երեւան», եւ, ապա «Երեկոյան Երեւան» թերթի նախկին էջկապ բանվոր, իսկ այժմ Լոս Անջելոս քաղաքի բնակիչ, «շարքային կապիտալիստ եւ շահագործող» Վահան Հովսեփյանի հետ:

- Ո՞նց ես, Վահան...

Իսկ Վահանը չի թողնում, որ ես հարցեր տամ, ինքն է հարցեր տալիս, հարցախեղդ է անում, կակազում է հուզմունքից, մեկ տխրում ու մեկ ծիծաղում է:

- Վահան, Վահան ջան, ախր քեզ հուզվել չի կարելի, - անհանգստանում, խնդրում է տիկին Անգինը:

- Կարելի է, - ասում է Վահանն ու կրկին ինձ է դառնում: Ուրեմն իմ էջկապ ընկեր Սաքոն այլեւս չկա, հա՛... Հե՛յ գիտի, հիշո՞ւմ ես, երբ «Երեւան» թերթի առաջին համարն էինք կապում... Աստղիկ Երիցյանը ո՞նց էր հուզվում... Տասն անգամ կարդում էր ամեն մի տողը... Նորի՞ կը ոնց է, ի՞նչ է անում: Իսկ Վալո՞ղը... Ընկեր Անանիկյանն էլ չկա, հա՛... Ի՞նչ պայծառ մարդ էր... Իսկ ընկեր Առաքելյանն ի՞նչ է անում, հիշո՞ւմ ես, որ գիշերները՝ ամեն համարի լույս տեսնելուց հետո, մեզ ավտոյով բարձրացնում էր Մոնումենտ ու վերից նայում էինք մեր Երեւանին... Երեւա՞նը ոնց է, Արտո... Իսկ հիշո՞ւմ ես, որ ինձ օգնեցիր, գնացիր քաղաքի տի նախագահի մոտ հասար, «ԶԻԼ» սառնարան առանք, տարանք տուն...:

- Հարյուր անգամ պատմել է, - ծիծաղում է Սարգիսը:

Տիկին Անգինը ժպտում է եւ գլխով անում:

- Հետաքրքիր մարդ ես, Վահան, - առիթից օգտվելով ընդհատում եմ նրան, - Էս ծով հարստության մե՞ջ էլ այդ սառնարանը չես մոռանում: Ազնիվ խոսք՝ ես մոռացել էի:

Բայց վարպետ Վահանին անհնար է շեղել:

- Բա դա մոռանալու բան էր: Երեխաների կաթը թթվում էր ամեն օր... Հա, իսկ հիշո՞ւմ ես, թե ինչ ուրախ օր անցկացրինք «Արարատ» ռեստորանում, երբ մեր թերթի 1000-րդ համարն էր լույս տեսել: Հիշո՞ւմ ես, երանի այն օրը, չէ՞, Արտո...

- Իսկ դու գիտե՞ս, որ շուտով «Երեկոյան Երեւանի» 10000-րդ համարն է լույս տեսնելու, վարպետ Վահան, - ասում եմ ես:

- Տասը հազա՞ր, - զարմանում է Վահան Հովսեփյանն ու կկոցում է աչքերը: Երեւի հաշիվներ է անում մտքում: - Ուրեմն էդ քանի՞ տարի է անցել, տե՛ր Աստված... Տասը հազա՞ր... Դու գիտե՞ս, որ շատ փորձեցի բաժանորդագրվել, բայց չէն անում: Չէն գրում: Ով գալիս է հայրենիքից ու հարցնում է, թե ինչ բերեմ, ասում եմ՝ «Երեկոյան Երեւան» բերեք: Մեր թերթն ուրիշ թերթ էր... Ու ես գիտեմ, բոլորն էլ ասում են, որ մեր թերթը շատ կարգին է պահել իրեն նույնիսկ ամենախառնակ ժամանակներում: Այդպե՞ս է...

- Այդպես է:

- Ափսոս, որ ես մերոնց հետ չեմ լինելու այդ օրը, տասը հազարերորդ համարի լույս տեսնելու օրը: Ի՞նչ անեմ, իմ կյանքն էլ այդպես դասավորվեց... - Նա նորից կակազում է, եւ տիկին Անգինը անհանգստացած նրան է նայում: - Արտո, դու մի հարուստ հայի մասին էիր գրել, որ Ավստրալիայում էր ապրում, հիշո՞ւմ ես...

- Հիշում եմ:

- Այդ հայն ասում էր, ես ամեն ինչ ունեմ՝ ինչ մարդուն պետք է ապահով ապրելու համար: Եւ, եթե հայ լինելս մոռանամ՝ շատ երջանիկ կլինեմ: Բայց, ասում էր, հայ լինելս չեմ կարողանում մոռանալ, ի՞նչ անեմ...

- Հիշո՞ւմ ես:

- Հիշում եմ, Վահան:

- Ա՛յ, ես նույն այդ հայն եմ, միայն թե մի տարբերությամբ: Ես ոչ թե չեմ կարողանում, այլ չեմ ուզում մոռանալ: Չեմ ուզում մոռանալ ու չեմ մոռանում... Եւ իմ ապրած կյանքի ամենալավ ժամանակն էլի համարում եմ այն օրերը, երբ «Երեւան» թերթն էինք ստեղծում: Հավատա... Ու երբ տեսնես մերոնց, հենց այդպես էլ ասա, հա՞...

Ես խոստացա վարպետ Վահանին ու կատարում եմ խոստումս:

«Երեկոյան Երեւան» թերթի խմբագրության հարգելի աշխատողներ՝ փոքրից մինչեւ մեծը, կեցցեք դուք եւ շնորհավոր հայ ընթերցողի սիրելի թերթի տասը հազարերորդ հոբելյանական համարը: Հաջողություն եւ երկա՛ր-երկար ճանապարհ ձեր մեծ գործին: Բայց, քանի որ, տասը հազարը նույնպես, այնուամենայնիվ, մեկից է սկսվում, հիշեք նաեւ նրանց, ովքեր «Երեւանի» առաջին համարն են արարել եւ ովքեր ընդհանրապես երբեւէ աշխատել են ձեր խմբագրությունում: Որովհետեւ, ով աշխատել է Հայաստանի մայրաքաղաքի առաջին թերթի խմբագրությունում, հոգով ու սրտով միշտ իր սիրելի թերթի հետ է եւ ապրում է իր թերթի կյանքով... Եթե նույնիսկ հիմա Հայաստանում էլ չէ...

Վկան՝ երեւանցի նախկին էջկապ վարպետ եւ հեռավոր Լոս Անջելոսում անգամ, իսկական երեւանցի մնացած Վահան Հովսեփյանը:

ԱՐՏԱՇԵՍ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ